

# Պ Ա Տ Մ Ա - Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

## ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԱՆՏԻՊ ԷԶԵՐԻՑ ՄԵԿԸ

Ինչպես հայտնի է, հայ մեծատղանդ երաժշտագետ Կոմիտասի ստեղծագործական և գիտական ժառանգության նյութերը, նրա անագորույն հիվանդության ընթացքում, ցրիվ են եկել աշխարհով մեկ:

Հայ երաժշտական մշակույթի այդ թանկարժեք գանձերը այժմ հետզհետե հայտնաբերվում և ի մի են հավաքվում Երևանի Կոմիտասյան արխիվում, որը գտնվում է Հայկական ՍՍՏ Գիտությունների ակադեմիայի իրավասության տակ, Գրականության և արվեստի թանգարանում:

Կոմիտասի ձեռագրերը հայտնաբերելու և հավաքելու գործին մեծ օժանդակություն է ցույց տալիս մեր ժողովուրդը, հայ մտավորականությունը թե՛ Հայաստանում և թե՛ Սփյուռքում: Այդ գործում մասնավորապես կարևոր նշանակություն ունեցավ Փարիզի Կոմիտասյան խնամատար հանձնաժողովի և անձամբ՝ դեռևս Կոմիտասի եռանդուն աշխատակցուհին եղած, երգչուհի օրիորդ Մարգարիտ Բարսյանի աշակցությունը, որի շնորհիվ Երևան փոխադրվեցին շատ արժեքավոր ձեռագիր և տպագիր նյութեր՝ Կոմիտասի ձայնագրած ժողովրդական և հոգևոր երգերն ու դրանց մշակումները, գիտական հետազոտությունները, նամակները և այլն:

Մեծ երաժշտագետի կյանքի և գործունեության լուսաբանության համար շափազանց արժեքավոր եղան նաև հայտնի բանասեր և գրականագետ Ա. Չոպանյանի գրված նրա նամակները, որոնք Չոպանյանի գրական ժառանգության հետ 1957 թվականին Երևան փոխադրվեցին:

Այս բոլոր նյութերը Կոմիտասի երևանյան արխիվում համակարգվում, ուսումնասիրվում

և աստիճանաբար հրատարակվում են, լրացնելով բաղմավաստակ երաժշտագետի հարուստ ժառանգության պատկերը:

Ստորև հրապարակվող էջը է դարի հայ նշանավոր եկեղեցական գործիչ Կոմիտաս կաթողիկոսի հանրահայտ Հոփսիմյանց շարականն է («Անձինք նուիրեալք»), ձայնագրված և մշակված մեր ժամանակակից Կոմիտասի ձեռքով: Այդ ձեռագիրը, որ ներկայումս պահվում է Գրականության և արվեստի թանգարանում, սիրահոծար կերպով մեզ էր ուղարկել պոլսաբնակ կոմպոզիտոր և դաշնակահարուհի Գոհարիկ Ղազարոսյանը:

Երգը ներդաշնակված է եռաձայն խմբի համար, պարզ, համեստ ու զուսպ միջոցներով: Ձայնագրված է երկու տուն:

Ինչպես մեծանուն Կոմիտասի գրեթե բոլոր ստեղծագործական բնագրերը, այս էջն ևս պարունակում է վարպետի ձեռքով կատարված խմբագրական շտկումներ և լրացումներ (սևաթանաք սկզբնադրի վրա նախ մանուշակագույն թանաքով, ապա մատիտով՝ երգի երկրորդ տանը վերաբերող հավելումները):

Բնագիրը իր արժեքավոր բուն նյութից բացի, մի մասնավոր շահեկանություն էլ ունի հանճարեղ Կոմիտասի կյանքի հետազոտության տեսակետից. այն կրում է Կոմիտասի նշած «27 ապրիլ, 1916» թվականը: Ինչպես հայտնի է, դա այն օրերն էր, երբ վերահաս հոգեկան խանգարման առաջին նոպաներից հետո, Կոմիտասը ժամանակավորապես ապաքինվել էր և զբաղվում էր ստեղծագործական աշխատանքով:


Կոմիտասից մնացած ձեռագրերի, նրա ժառանգության այլևս թերթիկներով հայտնաբերումն ու հավաքումը հայ ազգա-

լին մշակույթի համար խոշոր նշանակություն ունեցող, հայրենանւիր գործ է, և մեծ է այն բոլոր անձանց երախտիքը, որոնք զեթ մի փոքր բանով նպաստում են այդ գործին:

Կոմիտասյան նյութերի կենտրոնացումը ճրկանում առանձին կարևորություն է ստանում ներկայումս, երբ Գիտությունների ակադեմիայի Արվեստի ինստիտուտը նախա-

պատրաստում է նրա երկերի հնարավորին չափ լրիվ ժողովածուի առաջին գիտական հրատարակությունը, որի առաջին հատորը («Մենեթեր գաշնամուրի քննարակություն») անցյալ տարի արդեն լույս է բնծայվել:

ՌՌՐԵՐՏ ԱԹԱՅԱՆ  
(Երաժշտագետ)



«ԱՆՁԻՆԸ ՆՈՒԻՐԵԱԼԸ»-Ի ԿՈՄԻՏԱՍՅԱՆ ԻՆՔՆԱԳՐԸ

# ԱՆՁԻՆՔ ԵՆՈՒԻՐԵԱԼՔ

Հեղինակություն ԿՈՄԻՏԱՍ ԿԱՔՈՂԻԿՈՍԻ (Ե շար)

Գրի առավ և դաշնակեց եռածայն խմբի համար  
ԿՈՄԻՏԱՍ ՎՈՐԴԱՊԵՏ (27 ապր. 1916 թ.)

Բնագրից վերականգնեց Ռ. Ա.

Moderato  $\text{♩} = 76$

ԱՍ - ձիճԲ    Եր-ւիր-եալք    սի - ռոյն    Քիս - սո - սի,

ԱՍ - ձիճԲ    Եր-ւիր-եալք    սի - ռոյն    Քիս - սո - սի,

Երկ-ճա - ռո    ճա - հա - սալք    Եւ կու - սանք    ի-մաս-սունք,

Երկ-ճա - ռո    ճա - հա - սալք    Եւ կու - սանք    ի-մաս-սունք,

ի պար-ծա նըս ձեր բարձ-բաց-եալ so - նէ

ի պար-ծա - նըս ձեր բարձ-բաց-եալ so - նէ

Մայր Սի - ովն դրս-տե - րովն իւ - րով:

Մայր Սի - ովն դրս-տե - րովն իւ - րով:

Հոփփ-սի - մէ, մեծ խոր-հուրդ եւ ա - նուն ցան - կա - լի,

Հոփփ-սի - մէ, մեծ խոր-հուրդ եւ ա - նուն ցան - կա - լի,

ըն-ծայ - եալ ի յերկ - ըի եւ դաս-եալ ընդ հրեօ-սակս,

ըն-ծայ - եալ ի յերկ - ըի եւ դաս-եալ ընդ հրեօ-սակս,

ե - ղեր օ - ըի-նակ սր-բու-թեան կու - սա - նաց,

ե - ղեր օ - ըի-նակ սր-բու-թեան կու - սա - նաց,

վար-դա-պե-սու - թիւն ա - բանց ար-դա-րոց:

վար-դա-պե-սու - թիւն ա - բանց ար-դա-րոց: